ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
ԱՎՏՈՏՐԱՆՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ, ՈՐՊԵՍ ՇԱՐԺԻՉԻ ՎԱՌԵԼԻՔ, ԽՏԱՑՐԱԾ ԲՆԱԿԱՆ ԳԱԶԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Սույն Համաձայնագրի մասնակից պետությունների կառավարությունները, այսուհետ՝ Կողմեր,

կարեւոր նշանակություն տալով ավտոտրանսպորտային միջոցների համար որպես շարժիչի վառելիք խտացրած բնական գազի օգտագործման հիմնախնդրի համատեղ լուծմանը, այդ վառելիքով Համաձայնագրի մասնակից պետությունների շուկաների բավարարման ավելի բարձր մակարդակի ձեռքբերմանը, դրա հիմքի վրա շարժիչների օգտագործած գազերի թունավորության էական նվազեցմանը եւ շրջակա միջավայրի վիճակի բարելավմանը,

հաշվի առնելով, որ Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետություններում ստեղծված է ավտոմոբիլային գազալցնող կոմպրեսորային կայանների ցանց (այսուհետ՝ ԱԳԿԿ), որը թույլ է տալիս խտացրած բնական գազով ավտոմոբիլային տրանսպորտով կատարել միջպետական եւ միջքաղաքային փոխադրումներ,

հիմնվելով բազմակողմ համաձայնագրերի վրա՝ 1992 թվականի մարտի 13-ի՝ "Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների շրջանակներում գիտատեխնիկական համագործակցության մասին", 1993 թվականի դեկտեմբերի 23-ի՝ "Անկախ Պետությունների Համագործակցության մասնակից պետությունների ձեռնարկությունների եւ ճյուղերի արտադրական կոոպերացիայի օժանդակության ընդհանուր պայմանների եւ մեխանիզմի մասին", 1993 թվականի դեկտեմբերի 24-ի՝ "Ներդրումային գործունեության բնագավառում համագործակցության մասին", համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

ՀՈԴՎԱԾ 1

Կողմերը կմիավորեն ջանքերը գիտատեխնիկական, արտադրական, ներդրումային եւ համագործակցության բազմակողմ ու երկկողմ այլ ձեւերի ապահովման գործում մեքենաներ եւ սարքավորումներ, շարժիչներ ու տրանսպորտային միջոցներ ստեղծելու, ԱԳԿԿ ցանցի զարգացման համար, որոնք անհրաժեշտ են ավտոտրանսպորտային միջոցների համար, որպես շարժիչի վառելիք, խտացրած բնական գազի արտադրության, պահպանման, տեղափոխման եւ օգտագործման նպատակով:

Կողմերը համաձայնեցված ձեւով կլուծեն համագործակցության իրավական, տնտեսական եւ կազմակերպչական հարցերը:

ՀՈԴՎԱԾ 2

Սույն Համաձայնագրի իրագործման ժամանակ՝ Կողմերը, որպես իրենց առաջնահերթ խնդիրներ, ճանաչում են հեղուկ նավթային շարժիչի վառելիքի խտացրած բնական գազով փոխարինման ծավալների մեծացումը եւ ԱԳԿԿ գոյություն ունեցող ցանցի ավելի լրիվ բեռնվածությունը գազի հիման վրա աշխատող ավտոմեքենաների համակազմի հաշվին, ինչպես նաեւ ԱԳԿԿ ցանցի եւ ավտոճանապարհների վրա լցակայանների կետերի համաձայնեցված զարգացումը, որոնցով իրականացվում են միջպետական փոխադրումներ:

ՀՈԴՎԱԾ 3

Սույն Համաձայնագրի շրջանակներում համագործակցությունը կիրականացվի ավտոտրանսպորտային միջոցների համար, որպես շարժիչի վառելիք, խտացրած բնական գազի օգտագործման բնագավառում համագործակցության Ծրագրի հիման վրա, այսուհետ՝ Ծրագիր:

Ծրագրում նախատեսված աշխատանքները կկատարվեն երկկողմ եւ բազմակողմ համաձայնագրերի, Կողմերի համապատասխան մարմինների, կազմակերպությունների,

ձեռնարկությունների եւ տնտեսվարող այլ սուբյեկտների կողմից կնքվող պայմանագրերի (կոնտրակտների), ինչպես նաեւ գիտահետազոտական եւ փորձարարակոնստրուկտորական աշխատանքների համատեղ ֆինանսավորման հիման վրա:

ՀՈԴՎԱԾ 4

Կողմերը կնպաստեն սարքավորումներ, կոմպլեկտային եւ բազմավառելիքային ԱԳԿԿ, լցակայանների եւ շարժական ավտոգազալցման կետերի մշակման եւ արտադրության բնագավառում կոոպերացիայի պահպանմանը եւ զարգացմանը:

ՀՈԴՎԱԾ 5

Կողմերը կնպաստեն գազալցակայանային եւ գազաօգտագործող տեխնիկայի, սարքավորման եւ շինարարական օբյեկտների մշակման, արտադրության եւ կառուցման ժամանակ նորմատիվային եւ տեխնիկական միասնական համաձայնեցված քաղաքականության անցկացմանը՝ կիրառելով շինարարության, շահագործման, տեխնոլոգիական ղեկավարման եւ անվտանգության նորմերի ու կանոնների միասնականությունը ապահովող չափանիշներ եւ տեխնիկական պայմաններ:

ՀՈԴՎԱԾ 6

Կողմերը պարտավորվում են կազմակերպել սույն Համաձայնագրի եւ սույն Համաձայնագրի զարգացման համար ստորագրած առանձին բազմակողմ եւ երկկողմ համաձայնագրերի իրագործման ընթացքի մասին տեղեկության օպերատիվ փոխանակում:

ՀՈԴՎԱԾ 7

Փոխադարձ պայմանավորվածությամբ, Կողմերը սույն Համաձայնագրում կարող են կատարել անհրաժեշտ լրացումներ եւ փոփոխություններ, որոնք ձեւակերպվում են համապատասխան արձանագրություններով եւ հանդիսանում են սույն Համաձայնագրի անբաժանելի մասը:

ՀՈԴՎԱԾ 8

Ցանկացած Կողմ կարող է դուրս գալ սույն Համաձայնագրից՝ դուրս գալու օրվանից առնվազն վեց ամիս առաջ իր մտադրության մասին ավանդապահին նախապես գրավոր ծանուցելու միջոցով:

ՀՈԴՎԱԾ 9

Սույն Համաձայնագիրը բաց է դրա նպատակները եւ սկզբունքները կիսող ցանկացած պետության կողմից միանալու համար:

ՀՈԴՎԱԾ 10

Սույն Համաձայնագիրը ժամանակավորապես կիրառվում է ստորագրման օրվանից եւ ուժի մեջ է մտնում դրա ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ՝ Կողմերի ներպետական ընթացակարգերի կատարման մասին երրորդ ծանուցումը ավանդապահին ի պահ հանձնելու օրվանից:

Կատարված է Մինսկ քաղաքում 1995 թվականի մայիսի 26-ին, մեկ բնօրինակով՝ ռուսերեն: Բնօրինակը պահվում է Անկախ Պետությունների Համագործակցության Գործադիր քարտուղարությունում, որը սույն Համաձայնագիրը ստորագրած յուրաքանչյուր պետությանը կուղարկի դրա հաստատված պատճենը:

* Համաձայնագիրը Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել 1996 թվականի ապրիլի 10-ից: